Հարբորտը «Մարթա Վաշինկթըն» նաւով վերադարձաւ Ամերիկա և նաւի վրա էլ պատրաստեց իր տեղեկագիրը՝ ստորագրուած 16 հոկտ. 1919թ.*):

Այդ տեղեկագրի մէջ զօրավար Հարբորտը խտացրել էր երեսուն օրւայ ճամբորդութեան ընթացքին հաւաքած տեղեկութիւններն ու հանած եզրակացութիւնները: Շատ էլ մխիթարական չէին նրանք հայերի համար: Նա պնդում էր, որ ծրագրուող Հայաստանում հայերը երբեք մեծամասնութիւն չեն կազմել, իսկ այժմ՝ ևս առաւել, որ հայ ժողովուրդը օժտուած է դրական յատկութիւններով, բայց չգիտէ յարմարւել իր շրջապատին: Հայերը պէտք ունեն արտաքին հոգատարութեան, և Միացեալ-Նահանգները պէտք է ընդունեն հոգատարութիւնը, բայց ո՛չ միայն Հայաստանի: Հարբորտը առաջարկում էր միացնել ամբողջ Թիւրքահայաստանը, Անատոլիան, Պոլիսը, Թրակիան և Անդրկովկասը մէկ մանդատի տակ: Այդ դէպքում Ամերիկան կարող է ստանձնել հոգատարութիւնը: Ցօդուտ մանդատն ընդունելու Հարբորտը բերում էր 14 հիմք, ընդդէմ՝ 13: Մի եզրակացութիւն, որ, ի հարկէ, ոչնչով չէր կարող ուժեղացնել Վիլսընի դիրքը և, ընդհակառակը, ջուր էր լեցնում վիլսընեան քաղաքականութեան թշնամիների ջրաղացի վրա:

Եւրոպայում արուած քայլերին զուգընթաց՝ Հայաստանի կառավարութիւնը աշխատում էր հարևանների հետ էլ համակեցութեան եթէ ոչ լաւագոյն, դէթ տանելի ձևեր ստեղծել: Այս նպատակով կատարւում էին մասնաւոր տեսակցութիւններ, տեսակէտների դրաւոր փոխանակութիւններ, խորհրդաժողովներ և այլն: Այս ուղղութեամբ մասնաւորապէս եռանդուն գործունէութիւն էին ցոյց տալիս Հայաստանի Հանրապետութեան Բաքուի դիւանագիտական ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը և Թիֆլիսի ներկայացուցիչ Լ. Եւանգուլեանը՝ երկուսն էլ յարգուած, ձեռնհաս և ազդեցիկ գործիչներ, որոնց ներկայութիւնը Թիֆլիսում ու Բաքւում, մանաւանդ Տ. Բէգզադեանի հմուտ ներկայացուցչութիւնը խոշոր օգուտներ էին բերում Հայաստանին: 1919 թւի վերջերին Լ. Եւանգուլեանը**), հիւանդութեան

---

*) Այս տեղեկագիրը հրատարակուեց 1920թ. Ամերիկեան Ծերակոյտի կողմից: Բացի տեղեկագրից առաքելութիւնը կազմել էր և 12 մասնագիտական տեսութիւններ. 1) *Քաղաքական գործոններն ու խնդիրները*. 2) *Թիւրքիայի և Անդրկովկասի կառավարութիւնը*. 3) *Թիւրքիայի և Անդրկովկասի պետական և մասնաւոր ֆինանսները*. 4) *Նոյն երկրների առևտուրն ու արդիւնաբերութիւնը*. 5) *Հանրային առողջութիւնն ու առողջապահութիւնը*. 6) *Ազգաբնակութիւնը, արդիւնաբերութեան յատկութիւնները, կենցաղը*. 7) *Կլիման, բնական հարստութիւնները, անասնաբուծութիւնը, երկրագործութիւնը*. 8) *աշխարհագրութիւնը, հանքային գործը և սահմանները*. 9) *Մամուլը Թիւրքիայում և Անդրկովկասում*. 10) *Մանդատատիրոջ զինուորական անելիքները*. 11) *Հաղորդակցութեան միջոցները Փոքր-Ասիայում և Անդրկովկասում*. 12) *Կենսագրութիւններ*:

**) Լ. Եւանգուլեանը վախճանուեց 1920ին: Նա Թիֆլիսի հայ բուրժուական մտաւորականութեան լաւագոյն դէմքերից էր՝ զարգացած ու կենցաղագէտ, որ վրացիների ու հայերի մէջ ունեցած իր ազդեցութեամբ և օտարների շրջանում վայելած յարգանքով՝ Հայաստանը ներկայացնում էր վայել արժանապատուութեամբ: